

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

ՆԱՄԱԿՆԵՐ՝ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Է.

Ազատ դաստիարակութեան մասին:

Սիրելի Սուրեն,

Բո նամակներից մէկում դու ոգևորուած գրում ես քո նախկին ուսուցիչների մասին, գովում ես նոցա և համեմատելով ներկայ ուսուցչութեան հետ սար ու ձոր ես նկատում. չկայ այն ոգևորութիւնը, չկայ այն սերտ կապը ուսուցչի և աշակերտի մէջ, ինչ որ դու և քո ընկերները ունէիք ձեր ուսուցիչների հետ և չես կարողանում դորա պատճառը բացատրել: Անշուշտ ժամանակները փոխուել են, կեանքը իւր ծանր բռնեցքը իջեցրել է մարդկանց գլխին և այդ ծանրութեան տակ թէ տրամադրութիւններն են փոխուել և թէ կեանքի պայմանները. իսկ մեր երիտասարդ ուսուցիչ ուսուցչուհիները չէին կարող դերձ մնալ այդ ծանրութիւնից և ահա ընդհանուր հոսանքով դնում են և նոքա: Բայց դու չկարծես թէ այն հին ժամանակներում ամեն ինչ կատարեալ էր, ոչ, մենք, ձեր նախկին ուսուցիչներս, շատ ու շատ թերութիւններ ունէինք, մենք էլ մեր անփորձութեան շնորհիւ չենք կարողացել այնքան անել, որքան պարտաւոր էինք անել. սակայն այն ժամանակ ուսուցիչներն աւելի անձնութեամբ էին գործում և անկեղծ, շիտակ, սրտացաւ վերաբերմունքով լրացնում էին մասամբ այն բացը, որ պիտի շատ մեծ լինէր: Բո նախկին ուսուցիչների առաւելութիւններից օգտուիր, բայց սովորիր և նոցա բաց թողած, թերի դաստիարակչական միջոցների փոխարէն ընդունել կատարեալ ձեւը, որպէսզի ուսուցչութեանդ նպատակը կատարեալ լինի:

Դու անշուշտ չես մոռացել թէ ինչպէ՞ր քո ուսուցիչները դաստիարակչական միջոց էին համարում պատիժները, երբեմն էլ ձեռք. դու երևի չես մոռացել, որ քո ուսուցիչները դաստիարա-

կելու նպատակով (անշուշտ շան անկեղծօրէն) պահանջում էին իրենց հրամանները կատարել անվրդով և նման շատ խնդիրներ, որոնք այժմ վերլիշելիս ցաւում եմ, թէ ինչպէս մենք աւելի օգտակար միջոցներ չենք փորձել գործադրել ձեր ինքնուրոյնութիւնը դարգացնելու, ձեր անհատական ընդունակութիւններին աւելի դարկ տալու համար:

Սակայն, ինչ ոք մենք չենք արել, դուք, մեղնից յետոյ եկողներդ պիտի անէք. սրանումն է կեանքի առաջադիմութիւնը, աստիճանական դարգացումը. և հէնց այդ նպատակով է, որ ես գրում եմ քեզ այս նամակների շարքը, մանաւանդ, ի մասնաւորի սոյն նամակը, ուր կամենում եմ քեզ բացատրել մի քանի դաստիարակչական առեղծուածներ:

Արդ, ինչո՞ւմն է կայանում մանկավարժական գործունէութեան նպատակը:

Անշուշտ նորանում, որ աջակցի մանկանը և առհասարակ դաստիարակութեան առարկայ եղող անձին, դառնալ ազատ ստեղծագործական աշխատանքի, ինքնադարգացման և ինքնակրթութեան ընդունակ. իսկ սորա նպատակն է մանուկից պատրաստել կատարեալ մարդ, ընդունակ ստեղծագործութեան և քեզմնաւոր աշխատաւոր կեանքի մէջ իրեն բաժին ընկած խընդիրներում:

Բայց այս ճշմարտութեան ի՞նչպէս հասնել, ի՞նչ միջոցներով, ահա այն առեղծուածը, որի մասին արժէ, որ մեր դաստիարակները ուշադրութիւն դարձնեն:

Դժբաղտարար մեր դաստիարակները միանգամայն անծանօթ են այն հարուստ ժառանգութեանը, որ թողել են մեզ Ամոս Կոմենսկին, Բուսսօն, Դիստիրվիզը, Ֆրէօբելը և ուրիշները. ուշադրութիւն չեն դարձնում երեխայի իւր աշակերտական շրջանի ժամանակ կրած կեանքի, ապրած լուպէների վերայ, նոցա համար երեխան իրրեւ երեխայ գոյութիւն չունի, ոչ ոք չի կամենում երեխայի, այս փոքրիկ մարդի ներքին աշխարհը հաշուի առնել: Եւ սա մեր դաստիարակների ձեռքին շուռ ու մուռ է գալիս, տանջւում է, սորա վերայ վարժութիւններ են կատարում բռնութեան ամեն ձևերով. ստեղծում են ուսուցման, դասաւանդման նորանոր մեթոդներ, բայց չեն տալիս նորան այն ազատութիւնը, որ պիտի երեխայի մէջ աճեցնէր նորա անհատականութեան ներդաշնակ դարգացումն:

Մինչև այժմ մեր դպրոցներում տիրում է մեծի հրամանը և փոքրի հնազանդութիւնը. դաստիարակչի հեղինակաւոր կարգադրութիւնը և դաստիարակւող մանուկի լռելիայն հպատակութիւնը, ի հարկէ այն պատճառարանութեամբ, թէ՛ երեխայի խելքի

բանը չէ միջամտել դպրոցական խնդիրներին մէջ, ուր իրենց մեծերն ու խելօքներն են կառավարում: Զէ՞ որ կեանքի մէջ էլ նոյնն է, այնտեղ էլ փորձուածներն ու խելօքները ղեկավարում և կառավարում են մասսաներին:

Թէ՛ Ամերիկայում և Շվեյցարիայում մանուկների մասնակցութեամբ դպրոցի կառավարչութիւնը ինչ բարեբար հետեանքներ է տուել, ես այդ մասին կգրեմ յաջորդ նամակովս, իսկ այժմ ես միմիայն կամենում եմ գուգահեռական անցկացնել այն երկու ուղղութիւնների մէջ, որ կոչւում է «հին» և «նոր». կամ «Ազատ դպրոցի» և «հրամաններով կառավարուող» դպրոցի մէջ:

Մինչև այժմ և այժմ էլ մեր դաստիարակները դպրոցում երեխաների Ֆիզիքական, բարոյական և մտաւոր կեանքի համար ղեկավար սկզբունք ընդունում են իրենց փորձառութիւնն ու գիտութիւնը և հետևաբար մանուկների մէջ աշխատում են արմատացնել իրենց հեղինակաւորութիւնը, գրանում գտնելով մանկան ապագայ բարիքը: Ասկայն եթէ այդ բարիքը իմ գործողութիւնների գիտակցական և ազատ նպատակը չէ, ապա ես կատարելով այս կամ այն ընդհանուր բարիքի համար, ես կատարում եմ հնազանդուելով ուժին, որն ինձնից մեծ է և կարող է ինձ կոտրել, հարկադրել եթէ ես չկամենամ հնազանդուել: Ուժի առաջ այդպիսի հնազանդութիւնը բարոյական տեսակէտից ռոքան օգտակար է: Միշտ և ամեն տեղ բարոյականը այն է, որ կատարւում է անհատի իւր գերազոյն կամքը և ոչ ուրիշի կամքը, թէկուզ դա լինի ամբողջ մարդկութեան կամքը: Ի հարկէ, սա չի նշանակում, որ անհատը պիտի յամառի և իւր անձը հակադրի ամբողջ մարդկութեանը, այլ որ անհատը իւր կամքը կատարելով կատարած լինի ամբողջ մարդկութեան կամքը, այսինքն ազատ, գիտակցաբար զարգանալով հասնի այն բարձր իմացականութեան, որ ամբողջ մարդկութեան բարիքի պահանջը լինի և իւր բարիքի պահանջը: Այս մասին յիշիր իմ առաջին նամակը, որ 1909 թ. գրել եմ քեզ *):

Ժխտելով հեղինակութեամբ կառավարելու եղանակը թերևս քո մտքում շփոթութիւն առաջ գայ, որ ես քարոզում եմ անիշխանութիւն, որովհետև եթէ ամեն մի աշակերտ իւր կամքին հետևի և ենթադրի թէ հենց այդ է մարդկութեան բարիքը, ապա ուրեմն ոչ դասարանում, ոչ դուրսը կարգ պահպանել անկարելի է և ջուրը կընկնի այն գեղեցիկ նպատակը, որ բարի ուսուցիչն ունի դէպի իւր սիրելի աշակերտները: Անշուշտ այդպէս կլինէր, նախ՝ եթէ ընդունենք, որ բոլոր երեխաները իրեն չար են, և

*) Արարատ 1909 թ. երես 361—373.

երկրորդ՝ եթէ դաստիարակը ձեռքերը ծալի ու մի կողմ քաշուի։ Բայց այդպէս չէ. իմ նախորդ նամակներէցս մէկում (Գ.Ֆ.) ցոյց եմ տուել որ Պետալօցցիի դաստիարակչական մեթոդը դալիս է ապացուցանելու, որ երեխաներն այնքան էլ վատ չեն, որ չհասկանան և որ նոցա գործակցութեամբ կարգի վերականգնումն շատ աւելի դիւրին է, քան հրամաններով ու սպառնալիքներով, ինչպէս այդ կտեսնենք յետոյ էլ։

Իմ նպատակն է ցոյց տալ, որ ներկայ կարգը, որ տիրում է մեր դպրոցներում, ներկայ յարաբերութիւնը ուսուցիչների և աշակերտների մէջ որ կրում է իր մէջ մի տեսակ խորհրդութիւն, աւելին կասեմ, երեխաների և ծնողների մէջ էլ դաստիարակչական տեսակէտից չկայ այն ջերմութիւնն ու սերտութիւնը, որ պիտի կարողանար բարձրացնել մանկան հոգին, աւելի վնասուկար է և երեխայի դաստիարակութիւնը չի տանում դէպի իւր վախճանական նպատակը։ Տես, ահա դպրոցի ճեսուշը, վերակացուները կարծես ոստիկանական պաշտօնեաներ լինեն մանուկների մէջ կարգ պահպանելու համար, ահա ուսուցիչը իր դասը վերջացրեց գնում է, փոյթն էլ չէ թէ իր դասարանից դուրս գալուց յետոյ ի՞նչ է կատարում...

Ընդհակառակը, մանուկը և դաստիարակը պիտի կադմեն մի սերտ ընտանիք հաւասար իրաւունքներով. այս երկու տարրերից ոչ մէկը չպէտք է հնազանդեցնի միւսին, ոչ դաստիարակը երեխային, և ոչ երեխան՝ դաստիարակին։ Եթէ նոցա մէջ ստեղծուի այն ընդհանուր, յարաբերութիւնը, որ կարելի է անուանել, ըստ Վենցելի, դաստիարակող յարաբերութիւն, ապա այդ յարաբերութիւնը երբէք չպէտք է նպատակ ունենայ երեխային հպատակեցնել դաստիարակչի կամքին, այլ թէ դաստիարակը և թէ մանուկը պէտք է զգան իրենց ազատ և մի ընտանիքի անդամ։ Ինչպէս որ ընտանիքի մէջ երբեք մեծը կատարում է փոքրի կամքը, այնպէս էլ դպրոցական կեանքում չպէտք է ժխտել մանուկների ցանկութիւնը, այլ անփնաս դէպքերում ընդառաջ դնալ նորան։ Ներկայումս մեղանում այդպիսի բան չի նկատուում։ Սովորաբար միայն մանուկն է հնազանդում դաստիարակի կամքին, իսկ դաստիարակը մանկան կամքին չի հնազանդում։ Սովորաբար դաստիարակում է միայն դաստիարակը։ Մինչդեռ ոչ թէ միայն դաստիարակը պէտք է մանկան դաստիարակի, այլ և մանուկը՝ դաստիարակչին։ Ներկայ հասկացողութիւններով սա քիչ օտարոտի կթուայ, բայց իրական դաստիարակութեան պահանջն է դա։ Մենք տեսնում ենք, որ այժմեան դաստիարակչական ձեռք

*) Արարատ 1909 թ. երես 638—649.

շատ անգամ նպատակի չենք հասնում, երբեմն էլ բացասական հետևանքի ենք հասնում, որովհետև մեր դաստիարակութիւնը միակողմանի է և մանկան կամքը դաստիարակչական գործողութեան մէջ արհամարհուած է:

Դաստիարակը, եթէ նա իսկապէս դաստիարակ է և ոգևորուած է իւր գործով, եթէ նա իւր դաստիարակութեան հիմք չի ընդունում երեխային իւր կամքին հպատակեցնելը, այլ ընդունում է նորան իբրև իւր մերձաւորը, իրեն հաւասար անձն, պէտք է նախաձեռնութիւն ստանձնի մանկավարժական այս յարաբերութիւնը ի կատար ածելու: Եւ դաստիարակը պիտի ամեն ջանք գործադրի, որ երեխան որքան կարելի է շուտ գիտակցի կամ զգայ, որ ոչ թէ ինքը մի առարկայ է, որին ինչպէս կամենան կարող են դարձնել, այլ որ ինքը դպրոցական ընտանիքի մի անդամն է և իւր դաստիարակչի փոքր ընկերը, դորանով դաստիարակի ազդեցութիւնն երեխայի վերայ կլինի աւելի կատարեալ և աւելի բեղմնաւոր: Որքան շուտ երեխան նկատի, որ դաստիարակը չի ձգտում ինչ էլ որ լինի ենթարկել նորան իր կամքին, այլ ընդհակառակը նոյնպիսի կամք ընդունում է երեխայի մէջ, յարդում է և ամեն կերպ աջակցում է և պաշտպանում, այնքան նա տրամադիր կլինի հետեւ իւր դաստիարակչի խելացի, արդարամիտ պահանջներին, որ երեխայի բարիքն ունի նկատի:

Ի հարկէ, երեխայի կամքի արտայայտութիւնը չպէտք է այնքան հեռու գնայ, որ բռնադատի իւր ընկերոջ կամ դաստիարակի կամքը. այսպիսի դէպքում դաստիարակը թոյլ պիտի չտայ նորան և սորանով ազատ դաստիարակութեան սկզբունքը չի խախտուի, ինչպէս որ չի խախտուում մարդկանց յարաբերութեան հաւասարակշռութիւնը, եթէ տեսնում ենք որ մէկը, սաստիկ գրգռուած ժամանակ կամենում է հարուածել և մենք միջամտում և թոյլ չենք տալիս նորան իւր կամքն արտայայտել իր ուղածի պէս, կամ հիւանդին, որ ցանկութիւն ունի անկողնից իջնել, մենք արգելում ենք, հակառակ նորա կամքի, անկողնից դուրս գալու, որ իւր կեանքը վտանգի չենթարկի:

Ընդհակառակը, իսկապէս անկեղծ դաստիարակը ոչ միայն չպէտք է արգելի մանուկի շարժումներն ու գործողութիւնները, որոնք չեն խանգարում ուրիշներին, չեն վնասում իւր առողջութեան, նորա դարգացման ընթացքին, այլ պիտի աշխատի առաջ բերել իւր սաների մէջ հէնց այդպիսի ցանկութիւն և կամք: Դաստիարակչին ոչ թէ պիտի մտահոգութիւն պատճառի մանկան ինքնակամ շարժումները, այլ նորա չափազանց հլու հնազանդութիւնը: Այն երեխան որ կամազուրկ է, կամ վախենում է արտայայտել իւր կամքը, մի խեղճ, դժբաղդ մանուկ է, և նա պէտք

է դաստիարակչի տոանձին հոգածութեան առարկան դառնայ, և այդպիսի մանկան կողմից իւր «ես»-ի ամէն մի թոյլ արտայայթիւնը պէտք է դաստիարակչի կողմից խրախուծուի և պաշտպանուի: Առհասարակ որքան մանուկը աւելի արտմաղիւր է հնազանդութեան, այնքան դաստիարակը պիտի նորա մէջ կենդանացնի ինքնուրոյնութեան ոգին, որպէսզի նորա մէջ չձեւաւորուի, չկազմաւորուի ապագայ ստրուկը, որ ստրկական ոգին նորա վերայ անջնջնկի դրօշմ չդնի:

Անշուշտ, այսպիսի դաստիարակութեան ընթացքում կպատահեն բացառիկ դէպքեր, երբ դաստիարակը նեղը կընկնի և հարկադրուած կլինի իւր կամքը թելադրել, սակայն այս էլ աւելի լաւ նպատակի կհասնի, երբ բացատրելով, պարզարանելով, համոզելով կանի, քան բռնի ուժով: Այդ կախուած է արդէն դաստիարակչի մանկավարժական տակտից, նորա փորձառութիւնից և մանկան հոգուն ծանօթ լինելուց:

Որպէս զի դաստիարակը քիչ առիթ ունենայ իւր կամքը թելադրելու մանուկներին, պէտք է նա աշխատի շատ վաղ ժամանակից, շատ փոքր հասակից արմատացնել երեխայի մէջ այն գաղափարը, որ ինքը մենակ չէ, որ ինքը հաշուի պիտի առնի և ուրիշներին—ընկերներին, մեծերին և այլն, վաղ ժամանակից երեխայի մէջ պիտի դարձնեն ուրիշի իրաւունքը յարգելու գաղափարը:

Մենք չպէտք է մոռանանք, որ երեխայի և առհասարակ մարդկանց կամքը ենթակայ է ոչ միայն արտաքին անձնաւորութիւնների կամքին, այլ և ներքին բացասական ձգտումներին, ուրեմն եթէ երեխան մի վատ գործ է կատարում, ոչ թէ նորա համար, որ նա ազատ է գործում, այլ որ ենթակայ է, կաշկանդուած է վատ բնազդներով, ահա դաստիարակի ցանկութիւնը պիտի լինի և պարտաւորութիւնը՝ օգնութեան զաւ մանուկին ազատելու այդ կաշկանդիւ վատ հակումներից և ուղղութիւն տալ նորա ազատ, անկաշկանդ կամքին: Եւ որքան շուտ և խնամքով դաստիարակը աշխատի երեխայի կամքը ազատել ներքին կաշկանդիւ շղթաներից, այնքան շուտ և հաստատուն կկանգնի երեխան բարւոյ ճանապարհի վերայ: Եւ այդ ձեով միայն կարող կլինենք մեր մանուկներից պատրաստել ոչ թէ կամազուրկ արարածներ, բազմի ձեռքին խաղալիկներ, այլ ուժեղ և արի անձնաւորութիւններ:

Դաստիարակչական այս նոր ձևը շատ էլ հեշտ չէ, բանի որ, ինչպէս ասացի, երեխան ենթակայ է շատ ու շատ կաշկանդիւ ներքին ու արտաքին շղթաների: Որոնց շնորհիւ նա մնում է ահազատ, մեր նպատակը չպէտք է լինի երեխային յայտարարել ազատ և սորանով կատարած համարենք մեր պարտաւորութիւնը:

այլ որ աշխատենք, որ նա իրապէս ազատ լինի իւր կրքերի, վատ բնազդների և արտաքին անձերի ազդեցութիւններից, իսկ դորան հասնել կարելի է միայն մեծ ջանք թափելով: Առանց այդ մեծ ջանքերի, կատարած թոյլ գործը կմնայ անկատար և անպտղաբեր:

Ստեղծելով դպրոցում ազատ դաստիարակութիւն չպէտք է աչքաթող անել, որ բոլոր դպրոց յաճախող մանուկները անազատ են շնորհիւ իրենց անային դաստիարակութեան, ուր նոցանից իւրաքանչիւրը օրօրոցից մինչև դպրոց գալը սովորել է մեծին լսել, նորա կամքը կատարել: Այս պատճառով էլ դաստիարակը պէտք է մեծ հողածութեամբ աշխատի, որ երեխայի ընտանեկան դաստիարակչութիւնն էլ ընթանայ ազատ, որ այնտեղ էլ երեխան զգայ իրեն ազատ իր կամքը արտայայտող: Եւ որովհետեւ բացառիկ են այն ընտանիքները, իսկ մեղանում համարեա թէ չկան, որ ըմբռնեն առհասարակ դաստիարակչութեան, ի մասնաւորի ազատ դաստիարակչութեան նշանակութիւնը, ապա ուրեմն դաստիարակիչը պէտք է աշխատի ըստ կարելոյն մօտիկից ծանօթանալ մանուկների ընտանեկան զրութեան հետ. յաճախ շփուի, յաճախ խորհրդակցութիւն ունենայ նոցա հետ և աշխատի նոցա էլ համոզել դաստիարակչական այս հղանակին հետեւի:

Ոչ ոք չի ժխտել, որ ծնողները սիրում են իրենց երեխաներին և սիրում նոցանից, և այս սէրը, որ սիրտացնում է յարաբերութիւնը դաւակի և ծնողների մէջ, ահագին դեր ունի կատարելու դաստիարակչական գործում. բայց միթէ չգիտենք, որ ծնողները չգիտեն իրենց զաւակներին սիրելու տեսակը և այդ պատճառով էլ նոցա սիրով դաստիարակութիւնը ոչ թէ մանկան մէջ առաջացնում է ապագայ մարդուն, այս բառի իսկական իմաստով, այլ նորա մէջ այլանդակում է նորա մէջ եղած մարդկային սաղմը: Քեզ պատահած կլինեն երեխաներ, սիրուած, շատ սիրուած ծնողներից. որոնք վախենում են նոյն իսկ իրենց ամենահետաքրքրող խնդիրների մասին խօսք բանալ վախենալով, որ յանցանք չգործեն և ամենալաւ դէպքում ծնողների նկատողութեանը, կամ առանց նախաճաշի մնալուն չարժանանան: Պատահած կլինին և երեխաներ, որոնք երես առած իրենց ծնողների անհուն սիրուց, ոչ մի չափ ու սահման չեն ճանաչում իրանց խօսքի ու գործունէութեան մէջ: Ուրեմն սիրել բաւական չէ, այլ պէտք է գիտենալ թէ ինչպէս սիրել: Ահա մի պարտականութիւն ևս, որ դաստիարակիչը պիտի վերցնի իր վերայ և ծնողների ևս սովորեցնի իրենց զաւակներին սիրել այս բառի իսկական իմաստով, առանց նոցա երես տալու նոցա ամեն քմահաճոյքը կատարելով և առանց ստրկացնելու իրենց կամքին:

Արդ, սիրելիս, դու և քո ընկերները աշխատեցէք ազատ դաստիարակութեամբ պատրաստել ձեր սաներից ապագայ հասարակական ազատ գործիչներ. դորան հասնելու համար բացի դրարոցում մանուկների հետ լինելուց, յաճախ եղէք նոցա հետ դուրսը, դասերից ազատ ժամանակները, լաւ ծանօթացէք ձեր սաների ընտանեկան պայմաններին, նոցա ծնողների հետ յաճախ տեսնուեցէք, այն, ինչ որ դուք կարող էք անել ձեր անձնական, մասնաւոր բարեկամական յարաբերութեանց ժամանակ, չէք կարող անել պաշտօնական յարաբերութիւններով:

Դա հեշտ գործ չէ, դա կլիւի ձեզանից շատ ժամանակ և շատ հոգս կպատճառի ձեզ, բայց չէ՞ որ դուք էլ մեր հասարակական կեանքի աղն էք. չէ՞ որ մեր կէս աստուածներն էք և մեր յարգանքի առարկան, չէ՞ որ ձեզ են հաւատացել հայութեան ապագայ յոյսը, դուք էք նոցանից պիտանի կամ անպէտք սերունդ պատրաստողները. ուրեմն ձեր կոչումի բարձրութեան և վեհութեան չափ էլ սպասելիքներ ունենք ձեզանից:

Երբէք մի յուսահատուէք առաջին անաջողութիւններից, սխտեմատիկ կերպով առաջ տարէք և վերջ ի վերջոյ յաղթանակողը դուք կլինէք, որի համար կատարեալ յաջողութիւն եմ ցանկանում ձեզ:

Քո նախկին Ուսուցիչ՝

40 նոյեմբերի 1917 թ.